— Իսկապէս շատ սովորական մի դէպք, որի նմանը համարեա ամէն օր, ամէն գիշեր պատահում է, — պատասխանեց վարպետը, նստելով Ասլանի մօտ:

— Այգիներից միրգ էին գողանում: Թուրք կամ քուրդ գիւղացիները, երբ քաղաքը բան են բերում վաճառելու, գիշերը, դէպի իրանց գիւղերը վերադառնալու ժամանակ, սովորութիւն ունեն կողոպտելու հայերի այգիները: Դա պէտք է մի առանձին բարութիւն համարել, երբ բաւականանում են միայն պտուղներ գողանալով, բայց այդ անիրաւները կտրատում են եւ ծառերը: Տեսնում ես, ցերեկով լուռ ու մունջ անցնում են այգիների մօտից, նայում են ծառերի վրայ, նկատում են, որ այսինչ նորահաս կեռասենին, այնինչ գեղեցիկ տանձենին կարող է ծառայել իրանց կոտրած գութանը կամ արօրը նորոգելու, իսկոյն նշան են դնում, եւ, գիշերը մտնելով այգին, կտրում են եւ տանում: Տիրոջ տարիներով խնամած ու հասցրած ծառը ոչնչանում է, այգին այլանդակւում է: Իսկ որքա՜ն ցաւ է պատճառում այդ դժբախտութիւնը խեղճ այգեգործին: Ես տեսել եմ ընտանիքներ, որոնք օրերով նստած իրանց սիրելի ծառերի կտրած բների մօտ, լաց են եղել, սուգ են կատարել, որպէս սպանուած որդու գերեզմանի վրայ:

Պատահած անցքը, որքան վարպետի համար վրդովեցուցիչ էր, նոյնքան Ասլանը սառն կերպով վերաբերուեցաւ: Այդ երկրում կարգից դուրս բան չէր, որ մէկը աշխատասէր է, ծառեր է տնկում, այգի է մշակում, պտուղներ է հասցնում, իսկ միւսը ծոյլ է, անկիրթ է. սովորել է միայն բռնութեամբ յափշտակել առաջինի աշխատութեան արդիւնքը:

— Փոխանակ իրանք լաց լինելու, լաւ չէ՞ր լինի, որ կտրողներին լացացնէին, — ընդհատեց Ալանը վարպետի խօսքը:

— Լաւ կը լինէր, — պատասխանեց վարպետը խորին կերպով հոգոց հանելով: — Բայց այդ դժուար է... շատ դժուար է... նրանց կողմումն է վայրենի ուժը... նրանց կողմումն է անպատիժ բարբարոսութիւնը... Մեր ձեռքերը կապել են, իսկ նրանցը՝ բաց թողել... Մեր ձեռքում մի փայտի կտոր անգամ չեն թողել, իսկ նրանք սուր են կրում... Մենք զրկուած ենք անձնապաշտպանութեան ամէն միջոցներից: Եթէ այգետէրը մի ամենափոքր ընդդիմադրութիւն ցոյց տայ եւ թոյլ չտայ, որ իր ծառը կտրեն, հաւատացած եղէք, որ միւս գիշերը կը մտնեն նրա տունը եւ նրա պարանոցը կը կտրեն: Եւ այս տեսակ չարագործները կը մնան անպատիժ, որովհետեւ այստեղ հայի գլուխը մի սոխի գլխի չափ արժէք չունի:

— Եթէ ամէն հայ իր սենեակում այդպէս զէնքեր ունենար, էլ նրա գլուխը չէին կտրի սոխի նման, — նկատեց Ասլանը: